**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային, տնտեսական և գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«09» դեկտեմբերի 2024թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Տիգրան Ջեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.**

Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովը որոշեց.**

Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և գնման ընթացակարգը 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

**2.1.** Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

**- 1-ին չափաբաժնի մասով Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,**

**- 7-րդ չափաբաժնի մասով Սմարթլայն ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:**

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Արեալ Շոփ ՍՊԸ-ի, ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

**2.2.** Հաշվի առնելով, որ գնման ընթացակարգի շրջանակում 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ ________ Նորայր Աղամալյան

________ Անդրանիկ Աբգարյան

________ Տիգրան Ջեյնալյան

________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ________ Գայանե Դադիվանյան